ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք
Հասցե՝ ք. Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4
Հեռ՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հոկտեմբերի 2026 թվականի N 8533-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ԱՃՈՒՐԴԻ ԿԱՅԱՑՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՔԱՅԼԻ ՉԱՓԸ ՀԱՇՎԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 68-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ ապրիլի 12-ի թիվ 286 և 2023թ հոկտեմբերի 10-ի N 1667-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2026 թվականի հոկտեմբերի 16-ի N 345-Ա և հոկտեմբերի 29-ի N 379-Ա որոշումները՝ **որոշում եմ.**

1. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի՝ 03-070-0227-0043, 03-068-0019-0017, 03-068-0019-0014, 03-068-0019-0015, 03-050-0215-0024, 03-070-0025-0028, 03-003-0111-0071, 03-072-0225-0001, 03-083-0123-0053 վաճառքը էլեկտրոնային աճուրդային եղանակով անցկացնել 2026 թ. դեկտեմբերի 22-ից դեկտեմբերի 26-ը:

2. 2026թ. դեկտեմբերի 22-ից դեկտեմբերի 26-ը կայանալիք աճուրդի քայլի չափը հաշվարկել ելնելով լոտի մեկնարկային գնից, սահմանվում են մեկնարկային գնի նվազագույն հավելման հետևյալ չափերը՝

1) լոտի մեկնարկային գնի մինչև 100.000 դրամի դեպքում նվազագույն հավելման չափը սահմանվում է 500 դրամ.

2) լոտի մեկնարկային գնի 100.001-500.000 դրամի դեպքում՝ 1.000 դրամ.

3) լոտի մեկնարկային գնի 500.001-1.000.000 դրամի դեպքում՝ 10.000 դրամ.

4) լոտի մեկնարկային գնի 1.000.001-10.000.000 դրամի դեպքում՝ 50.000 դրամ.

5) լոտի մեկնարկային գնի 10.000.000-ից ավելիի դեպքում՝ մեկնարկային գնի 1 %-ի չափով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՆՈՐԱՅՐ ՀԱԿՈԲՅԱՆ**

30 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2026 թ.
Ք.ՄԱՍԻՍ